

ԳԱԻԱՌԱԿԱՆ ՔՐՕՆԻԿ

Մ Ե Ր Կ Ե Ա Ն Ք Ի Ց

IV.

Ի՞նչ է օջախը:

Տեսանելի օջախը տան վառարանն է: Ալդտեղ ամեն կողմից բաց արևում է կրակը հասարակ, հովական խարուկի պէս. նա տաքացնում է տունը, տաքացնում է տան մէջ ապրողներին: Նորա շուրջն են նստում մարդիկ, մի կողմը շրջան են կազմում. կրակը տաքացնում է բոլորին առջևից, իսկ մէջքը դարձրած է լինում դէպի տան պատերը: Ալդտեղ է եփում ընտանիքի կերակուրը, ալդտեղ են հաց ուտում, երես լանում, երեսին խաչ հանում: Դա տան կենդրոնն է, սիրտը. դորա մօտն են տեղի ունենում խորհուրդ ու մտածութիւն, դորա շուրջն են կատարում ընտանեկան ուրախութիւնը և լացը, սուգը: Ալդտեղից է վառւում տան ճրագը, դէպի ալդտեղն են գնում ամենքը: Ալդտեղ արևող կրակի վերաջ են երդւում: Վերջապէս, ալդ օջախն ալն իսկ կրակարանն է, որի մօտ է տանում հ. Ալիշանը իւր Հալկակին («Յուշիկք Հալրենեաց Հալոց») և ալնպիսի քաղցր գրուցներ անում մեր մոռացած անցեալից: Դա է, իսկապէս, ալն տեղը, ուր կարելի է պատմել «Վարմիր Վարդանի» սրտառուչ պատմութիւնը. որովհետև ալդտեղ նստողները շատ են սիրում կենդանի խօսքը, եթէ ալդ խօսքը մանաւանդ լինում է անցեալի մասին: Օջախատէր հալքրիստոնեայի համար լաւ և գեղեցիկ խօսքից քաղցր, համեղ բան քիչ կարելի է գտնել. և ալդ պատճառով նա հրճւում է երեխայի պէս, դարմանում է, լաց է լինում արտասոււնք թափելով, երբ ծերունի նահապետի պէս մի ճարտար պատմող Հալկակին հասկացնում է թէ ով և ինչ էր Վարմիր Վարդանը: Հալկակի հետ լսում է նաև ալն ժողովուրդը, որ երեկոյեան, մթնելուն պէս, հաւաքւում է տուն, նստում է կրակի մօտ: Ամբողջ օրը գործելուց, չարչարելուց չետու ալդ մարդկանց միակ քաղցրութիւնը ալն հանգստութիւնն է, որ վաբւում են օջախի շուրջը բոլորած, միմեանց մօտեցած, միմեանց մտիկ տալիս:

Տեսաճեղի, իսկական օջախն ալս է:

Բայց օջախն ասածդ ուրիշ, աւելի մեծ, վերացական հասկացողութիւն է: Իւրաքանչիւր առն, ինչպէս և մարդկային իւրաքանչիւր գործը, պիտի ունենալ իւր մէջ սրբութիւն. առանց սրբութեան անհնարին է ապրել, կեանք վարել. սրբութիւնը—ալը ալն իսկ նպատակն է, որի համար աշխարհն է կանգնած, մարդկային ազգն է ապրում: Ընտանիքի համար ալ սրբութիւնը մաքուր և անարատ կենցաղավարութիւնն է, ալն տալ և անշէջ սէրն է, որ ընտանիքի անդամները պիտի տածեն դէպի միմեանց. բարի և մարդավաբն կենցաղը պարտադիր է ամեն մարդու համար: Շատ հին ժամանակներից, դարերի սկզբից մարդկանց սիրով և երկրպագութեամբ սրբագործւած են կանոններ և հասկացողութիւններ, որոնց կատարելովը մարդ կարող է ասել թէ ինքն էլ մարդ է, ինքն էլ ալն խելացի, բանական էական է, որին սահմանւած է երկրի տէր լինել: Տիրել երկրի մի մասին, գրաւել աշխարհից մի փոքրիկ անկիւն, ուր մարդու փոքրիկ անձնաւորութիւնն է տեղաւորում, կարելի է իրաւունքով, ազատ պահանջով, առանց բռնութեան, առանց ուրիշին զիպչելու, մարդկային և հոգևոր կանոններով: Մարդը ազատ և լաւ ապրելու համար իրաւունք պիտի ստանալ իւր սեպական խղճից, ալն հասարակութիւնից, որի հասկացողութիւններին, օրէնքներին հպատակելով, ապրում է նա: Ահա ալք բոլոր բարդ հասկացողութիւնները նահապետական մարդն ըմբռնում է մի օջախ բառը լսելով: Բաւական չէ որ նա ըմբռնում է թէ ինչ հոգի, ինչ իմաստ ունի ալք բառը. նա նրան միշտ տեսնում է իւր աչքի առաջ, միշտ զգում է որ նա, ալք աներևոյթ սրբութիւնը, շօշափում է նրան, պահանջում է, թև է տալիս, խրախուսում, լուսահատութիւն էլ պատճառում: Եւ ալք նահապետական մարդը բոլորովին անձնատուր է լինում ալք օջախին, ալք սրբութեան պահանջներին: Չր կալ մի ալնպիսի իշխանութիւն, որ ալնքան գրաւէր մարդու սիրտը, ալնքան հնազանդ, հլու, միշտ խոնարհ հպատակ դռնէր, որպէս անում է օջախը: Ի՞նչ է կեանքի նպատակը նահապետական մարդու համար, պարզ ասած—քնչն է ալն բանը, որին նախելով նա ապրում է, ճանապարհ է ճանաչում, գործունէութեան ալս կամ ալն ասպարէզն է ընտրում:—Օջախը:

Ի՞նչ է նշանակում օջախ, հարցրէք ալք մարդուց և նա կը պատասխանէ ալն, ինչ պիտի պատասխանէր—եթէ խօսուն լեզու ունենար—մի թռչուն, որից կը հարցնէին թէ քնչ է բոլքը: Մեռած է թռչունը առանց բոլքի. մեռած, անհասկանալի բան է նահապետական մարդը առանց օջախի: Նա ալք մարդու պատիւն է, երեսի ամօթխածութիւնն է, նորա սրտի կուռքն է, որին նա երկրպագում է:

Լինելով ալքքան մեծ, բարդ հասկացողութիւն, օջախը մի ընդարձակ պատմութիւն ունի, որ պիտի իմանան բոլորը. նա ունի բազմատեսակ ծէսեր, օրէնքներ. ամեն ինչ—հասարակական թէ անհատական հաս-

կացողութիւն, աւանդութիւն, աշխարհահալեցողութիւն՝ նորա վարկը պինդ և անուշը անաղարտ, հեղինակաւոր պահելու համար Են ճգնում։ Այդ պատճառով էլ նա ամենայն հնչողութեամբ դոհեր է պահանջում։ Օրինակ, Տղամարդը սպանել է իւր կնոջը, տեսնելով նրան իւր տանը մի օտար ողամարդի հետ մենակ։ Այդ մի ոճիր է, շատ անգամ հիմք չ'ունեցող մի լանցանք է։ օրէնքը խստութեամբ պատժում է լանցաւորին։ Բայց հասարակութիւնը աղպիւսի տղամարդին չի դատապարտում։ Հասարակական կարծիքը անտարբեր է մնում նոյն իսկ ոճիրի մանրամասնութիւնների վերաբերմամբ, քանի որ այդ ոճիրը ընդհանուր մի դոյն ունի—օջախի սահանջ։ Մի ալ օրինակ, ինչո՞ւ արքան տանջոււմ է մի նորահարս, ինչո՞ւ արքան արտասոււնք է թափում, օրեկան հարկւր անգամ Աստուածանից մահ է խնդրում։ Շատ հեշտ կարելի է իմանալ պատճառը. նրան ալ կամ ալն պատճառով տանջում է սկստուրը կամ թէ ինքը, տղամարդը։ Եւ տեսէք. արքան արտասոււնք, արքան տանջանք գլին չ'ունի ոչ ոքի համար. նրան չեն խղճում, նորա դրութիւնը մտատանջութիւն չի պատճառում։ միլիթարական խօսք եթէ կա, նորա հետ անխղելի է լինում խոնարհ ու հանդարտ մնալու, համբերելու խրատը։ Ամենքը դիտեն թէ ինչիցն է այդ. ամենքը ճանաչում եւ լարդում են ալն իշխանութիւնը, որ իրաւունք է աւել նորահարսին տանջելու. այդ իշխանութիւնը օջախն է։ Նոյն իսկ տանջւողի ծնողներն էլ անտարբեր են դտնւում դէպի այդ տանջանքները։ Նրանք, ճշմարիտ է, պախարակում են վատ մարդին ու սկեսորին, բայց մինչև վերջին ամենաթշուառ ծալքը հասնելը խորհուրդ չեն տալ իրանց աղջկանը ընդդիմադրել տանջող իշխանութեանը, ալ ընդհակառակն՝ կը հասկացնեն նրան այդ իշխանութեան, այդ տանջանքի անխուսափելի անհրաժեշտութիւնը և բացարձակ կարողութիւնը։

Առանց տատանման կարող ենք ասել, որ տղամարդի պարտաւորութիւնները դէպի օջախը շատ չեն խիստ չափոնի, շատ չեն բազմակողմանի։ Տղամարդը պարտաւոր է միայն օջախը պահպանելու համար ոչինչ ուժ չը խնայել։ Նա պիտի բերէ, պիտի կառավարէ, բայց եթէ չը բերէ էլ, չը կամենալ կառավարել. նրան շատ էլ չեն չարչարիլ այդ պատճառով։ Ուրիշ բան է կնոջ պարտաւորութիւնը դէպի օջախը։ Կարող ենք հասնել այն եզրակացութեանը, որ օջախ ասած բանը հաստատւած է կանանց համար։ Հասկանալով թէ ինչ է օջախը, մենք կը հասկանանք թէ մեր ժողովրդի դարաւոր կեանքը ինչ է արել կնոջ դրութիւնը հաստատ հիմքի վերալ դնելու համար, կնոջ ամբողջ էութիւնը հասկացնելու համար։ Առանց կնոջ օջախ չի լինիլ. կինն է ալն մարմինը, որ պատւանդան է ընտանեկան սրբարանին և կինն է, որ օջախին տալիս է առատ հարկ։ Նա օջախի ծառան է, նորա խոնարհ սպասաւորն է, որ մի և նոյն ժամանակ իւր կոչումը միացնելով օջախի—ընտանեկան սրբարանի էութեան հետ, պարզում է թէ ինչպիսի մութ, երկուքի բան է նա տղամարդի համար, ինչքան

բարձր միտք ու նշանակութիւն է արտապատում մարդկային ազգի մէջ։ Տեսնենք թէ կինը ինչպէս է սկսում իւր սպասաւորութիւնը օջախին։ Այդ մտքով մենք պէտք է հետեւենք օտար ընտանիքից եկած և մի ուրիշ օջախի ծառայութեան մէջ մտցրած կնոջ, Ասել է թէ պիտի իմանանք նորահարսի ինչ լինելը։

Աղջիկ ուղեւոր համար խնամախօս զնացածները աչսպէս են արտապատում իրանց գալստեան նպատակը. «ձեր օջախից մի բուռը մոխիր ենք ուզում վերցնել»։ Այդ ֆրազը մի կողմից ցոյց է տալիս թէ որքան ցած նշանակութիւն ունի աղջիկը ամեն մի ընտանիքի համար, քանի որ նա ոչ ալ ինչ է, եթէ ոչ օջախի մոխիր. իսկ միւս կողմից պարզում է խնամութեան բուն պատճառը. ուզում են մի բուռը մոխիր վերցնել օջախից, աչսինքն այդ օջախի կրթած ու պահպանած մի անդամն են ուզում տանել. դրանով չպտնւում է մի վստահութիւն դէպի օջախը. և ոչ միտն վստահութիւն, ալ և օջախի պատասխանատուութիւնը. իրանից բաժանուող մի անդամի բարոյականի համար։ Այդ բուռը մոխիրը պիտի փոխադրւի մի ուրիշի օջախը, պիտի միանայ աչս վերջինիս մոխրի հետ, պիտի խառնւի և աչսպէս ծառայէ այդ օջախին, ինչպէս ծառայում է եղած մոխիրը։ Մոխրի փոփոխութիւնը, էութիւնը, ի հարկէ, դրանով չի փոխւում. միայն աւելանում է մոխրի քանակութիւնը, որ և ցանկալի է երկու կողմերի համար։ Եւ խսկապէս մի բուռը մոխիրը պիտի աչս միայն իմանայ, որ նա ուրիշի մոխրի հետ պիտի խառնւի։ Աղբպէս էլ լինում է։ Նորահարսը եկեղեցուց իւր ամուսնու տունը մտնելուն պէս, դեռ երեսը ծածկած, դեռ ոչ ոքին չը տեսած, ոչ ոքի հետ չը խօսած, մօտենում է օջախին, բազմաթիւ հարսնածուներն ներկայութեամբ չգտնւմ է, համբուրում օջախը։ 'Իս առաջին անխօս, բայց հանդիսաւոր վկայութիւնն է, որ նա անում է՝ թէ նա պիտի ըստ ամենալնի հնազանդ լինի աչս օջախին, աչսինքն աչս տան կարգ ու կանոնին, պիտի սիրէ, պիտի լարգէ նրան անգամ իւր ուժից էլ վեր։ Նա աչս խոստումը կատարում է մի տոկունութեամբ, որ միանգամաչս պատիւ է բերում նրան։

Նորահարսը, չպտնի է, տան բոլորի սիրելին է. մանաւանդ ուրախ են նրանով փեսայի հաչրն ու մայրը, քուրբը. նորա երեսին ծիծաղում են, նորա համար թագուն համեղ պատառներ են պահում, որպէս զի նորա բերանը քաղցրացնեն։ Նորահարսի կալտառ շարժածքները, անխոնջ աշխատութիւնը զմալմունք է պատճառում ամենքին։ Բայց աչսպէս լինելով հանգերձ, նորահարսը մի նահապետական ընտանիքում մի խեղճ արարած է, որ իրստ աննախանձելի դրութեան մէջ է, Նորա վերաչ ամենքն ունին իրաւունք, նրանից ամենքն են հնազանդութիւն, կամակատար խոնարհութիւն պահանջում։ Նա գտնւում է մի ծանր իշխանութեան տակ, որ ճշնշում է նրան, բոլորովին փոխում է նրան։ Աղջիկ ժամանակը նա ուրիշ կենցաղավարութեան էր սովոր. նա գտնւում էր մի դրութեան մէջ, որ ալթմեանից շատ բարձր էր. և ալթմ նա պիտի շատ ցած պնալ, շատ

ստորանալ ու նորից, ալիքան ցածրութիւնից, պիտի սկսէ ուրիշ կերպ լինելու սովորել:

Նա մի անլեզու արարած է: Նա կամք չ'ունի, ցանկութիւն, սեպհական հայեացք չի կարող լստնել: Այդ բաւական չէ. նա իրաւունք չ'ունի վիրաւորելու, եթէ նորա ճակատին ամեն հայտնաք կայցնեն: «Հարսը հալը կամ մալը չի ունենալ», քարոզում է ժողովուրդը: Ասինքն՝ եթէ հարսի հօրն ու մօրն էլ հայտնի, նա չը պիտի վիրաւորւի, չը պիտի բողոքէ, պատասխան տալ: Ալիքէս ալի խեղճին ամին կողմից, ամեն տեղից ճնշում են. նորա մէջ եղած ինքնուրոյնութիւնը, անկախութիւնը խորտակում, ոչնչանում է: Եւ ալի սպանող, ճմրդ պարտականութիւնը աւելի լաւ կատարելու համար, նահապետական օջախը հաստատել է տան միծի իշխանութիւնը, որ համարեա անսահման է: Եւ մեծի իշխանութիւնը անըզհատ իւր գործն է կատարում: Վերջին վարձկան ծառան անգամ համատարաք անկախ է, իրաւունքի տէր, իսկ նորահարսը զրկւած է ամեն կողմից. նա սեպհական ճաշակ չ'ունի, նա առանց թոյլտուութիւն ստանալու չի կարող անալին մի ամենահասարակ կարգադրութիւն անել: Նա մինչև անգամ հիւանդանալու էլ իրաւունք չ'ունի. նրան լանդիմանում են թէ ինչու շուտ շուտ հիւանդանում է. ամեն տեսակ ցաւը չի տալիս նրան իրաւունք ասելու թէ նա հիւանդ է. իսկ երբ տեսնում են որ ալիքէս ասելով բան չի դառնում, հիւանդութիւնը չաղթում է խեղճին, նրան ուղարկում են իւր հօր տունը, որ ալնաեղ առողջանալ և ապա դալ իւր ամուսնու տունը:

Ալի տեսակ սարսափելի բռնութիւն մարդու հոգու և մարմնի վերալ գործադրում է գլխաւորապէս ալն պատճառով, որ նորեկ կինը օջախի հարազատ ծառան և սպասաւորը դառնալ: Ալի նպատակին հասնելու համար օջախը ուրիշ միջոց չ'ունի, ուրիշ կերպ կրթել չի կարող, ուրիշ կերպով ալի գաղափարը հասկացնելու հնար չը գիտէ. մնում է միայն բռնութիւնը, ամեն իրաւունքի տէր իշխանութեան գործիքը, որով պիտի ջախջախի կնոջ մէջ անձնասիրութիւնը, սեպհական կամքը, ալս կամ ալն կերպ գործելու ցանկութիւնը: Ալիքիսի մի ջարդւած ու ճնշւած էակ շինելուց լետոյ է նրան հետզհետէ ազատում մեծաւորի բռնակալութիւնից, թէև ոչ բոլորովին: Ալիքիսի մի բովի միջով անցնելուց լետոյ կինը ալ ևս չի կարող ալն չը լինել, ինչ որ պահանջում էր օջախը: Նա դառնում է մէկը ալն հազարաւորներից ու բիւրաւորներից, որոնք նրանից առաջ ծառայել են իրանց հիմնած օջախին: Հիմա տեսնենք թէ ինչ է ալիքիսի կինը օջախի համար:

Ի հարկէ, օջախը բոլոր ազգերի համար ընդհանուր հասկացողութիւն չէ. լինելով ասիական ազգերի համար տան, ընտանիքի սրբարանը, պատիւը, օջախը մի և նոյն ժամանակ առանձին բան է հալի տանը և առանձին է թուրքի տանը: Այս ու ալն ազգի բնորոշ գծերը շատ են տարբեր-

ւում. և ալդ չափով էլ տարբերուում են օջախները: Մեր հալ օջախը, լալտնի է ալեհնքիս, ուրիշ տեսակ կրթութիւն է տալիս իւր սաներին և ալեպէս հետևողաբար, ալեպէս մշտատեւ, անփոփոխ մի ուղղութիւն ունի, որ կարող ենք ասել թէ օջախի օրէնքը բազմաթիւ անխարդախ կատարողներ ունի: Եւ իրաւ, կան կատարողներ, մոլեւածողութեան հասած կատարողներ, Դրանք հալ կանաքն են:

Եթէ մենք կարծում ենք թէ հալ կիներ միայն այն նշանակութիւնն ունի նահապետական ընտանիքում, որ աշխատում է, կատարում է դրսի ու ներսի գործերը զարմանալի դիմացկանութեամբ, մենք, կը նշանակէ, շատ ենք սխալուում: Կնոջ կոչումը միայն ալդ չէ. գուցէ մեր իմացածը դեռ մի աննշան բան է համեմատելով այն նշանակութեան հետ, որ նա ունի իբր մի ընտանիքին հոգի, ուղղութիւն տուող մարդ: Իբրև մի ալեպիսի գործիչ, նորա գերը շատ մեծ է, պատկառելի: Եւ իրաւ, միթէ հալ կիներ չէ, որ պահպանում է հալ ընտանիք, Երևակայեցէ՛ք մի գիւղական մեծ ընտանիք: Նա ոչ գիր գիտէ, ոչ էլ ժամանակ ու կարողութիւն ունի իւր ինչ լինելու մասին մտածելու: Նա միշտ հոգսերի, դարդերի մէջ է, նորա համար գոլութիւն չ'ունի վերացական հասկացողութիւն՝ թէ ով է ինքը և ինչ է, ինչո՞վ պիտի պահէ իւր առանձնապատկութիւնը, աղալին որոշ կերպարանքը: Ալդ դերը կատարում է կիներ: Սա մի մոլի աւանդապահ է, շատ անգամ չափ ու սահման անցնող եռանդով է հաւատարիմ մնում իւր ազգային սովորութիւններին: Տղամարդը, պէտք է ասել, շուտ գալթակղող է. նորա մէջ, ինչպէս ինքն է խոստովանում, «հաւատ, հողի» քիչ է մնացել. եթէ նորա կամքին մնար, նա շատ բան զանց կ'անէր, շատ անգամ կը ծուէր ուղիղ ճանապարհից: Բայց նրան չեն թողնում, նորա մէջ «հաւատ, հողի» են պահում: Եւ ով է պահողը, եթէ ոչ հալ կիներ: Կիներ է, որ ամեն տեղ իւր մալրենի լեղուով է խօսում, կիներ է, որ կատարում է հալերից ու պապերից մնացած ծէսերն ու արարողութիւնները և կենդանի պատկեր է դառնում, որին նաչում է տղէտ, անհասկացող ժողովուրդը և տեսնում, ճանաչում է աչն, ինչ որ անհրաժեշտ է հալ-քրիստոնեայի օջախը կազմելու համար: Բազմաթիւ օրինակներ ունինք, որ հալ կիներ անընկճելի հաստատակամութեամբ դիմադրել է տղամարդին ալեպիսի դէպքերում, երբ պէտք էր ընտրութիւն անել ազգային և օտարամոլ նորութիւնների մէջ: Մի օրինակ թող լինի հաւատափոխութիւնը: Մի որ և է թափառաշրջիկ առաքել անշուքութեամբ է կարողանում հաւատացնել մի տղամարդի, որ նա պիտի իւր ետևիցը գնալ՝ երկնքի արքայութեան մէջ տեղը նստելու համար: Բայց հալ կնոջը հեշտ չէ ալդ հաւատացնելը: Շատ անգամ է պառահում, որ նոր առաքել դառած մարդը հարկադրում է կնոջը իւր ճանապարհով գնալ, խրատում է, խնդրում է, բարկանում է, բայց կիներ ընդդիմանում է: Սկսում են ընտանեկան փոթորիկներ, ձեռն ու կռիւ. և եթէ խեղճ կիներ գտնէ առեւտր

հայտնակում է մարդու պահանջին, պատճառը ուրիշ օրէնքն է, որ օջախն է դարձնել տալիս: Այդ օրէնքն այն է, որ ամեն դրուժին կարելի է խախտել, ոտնակոխ անել օջախի սէրի համար: Պատմեցանք սրբութիւնն է ընտանիքի համար: Որքան զրկանք, թշուառութիւն ու տառապանք է կրում կինը իւր օջախի սէրի համար: Նորա հասկացածը, նորա ամենից որոշ գաղափարն այն է, որ պէտք է օջախը պաշտօն պահել, աշխնքն ընտանիքի հանգստութեան ու բարօրութեան համար ղոհել ամեն ինչ: Տղամարդը արեցող է, վատնող է. տունը աղքատ է, կարօտ օրւաչ հացին: Բայց հաց կինը պինդ կը նստէ օջախի մօտ, ինքն իրան կրակին կը գցէ, կ'ախատէ, որ օջախը չը քանդւի: Նրան կը ծեծեն, բայց օջախի սէրի համար նա կազմել է մի աշխարհի օրէնք. «կնոջը երբ ծեծում են, նա դէպի դուռը չը պիտի փախչէ, այլ դէպի պոռճախը»: Կարծում ենք, որ այս խօսքերից աւելի պերճախօս վկայ չի կարող լինել կնոջ արարքի, կոչման մասին: Այստեղից պարզ երևում է, որ հաց կինը ամենից շատ ընտանիք կազմելու, ընտանիքի տէր լինելու նշանակութիւնն ունի. կարող է մոռացւել ամուսինը, անձնական երջանկութիւնը, կեանքի քաղցրութիւնը՝ ընտանիք, այն էլ առաքինի, միասին չաղկապւած գեղեցիկ ընտանիք կազմելու համար:—Ահա այն մեծ իղէալը, որին նւիրւած է նահապետական ժողովուրդը:

Սւ ալդ իգէալը իրագործում է օջախի հասկացողութեան շնորհիւ: Մենք տեսանք թէ ինչ է օջախը, հասկացանք թէ ինչի համար է նա: Նա պատրաստում է կնոջը, նա դարգացնում է կնոջ ուժերը, տալիս է նրան մի բաղմաչարչար նահատակի դրուժին՝ մեծ գաղափարին ծառայելու համար: Քանի որ չը կա ուրիշ կերպ կրթելու միջոց, քանի որ չալանի չէ մի ուրիշ ճանապարհ, որով կինը կարող էր հասնել իւր համար որոշւած կոչմանը, օջախը անում է ալդ բանը բռնութեամբ. նա ճնշում է, սպանում է կնոջ անձնատրուքիւնը, խլում է նրանից իւր սեպհական անձի համար մտածելու կարողութիւնը և ալդպիսով ստեղծում է մի էակ, որ հասկացողութիւն, կամք չ'ունի ուրիշ կերպ գործելու, առաջ գնալու: Հէնց ալդ է պատճառը, որ նահապետական կինը այնքան թուլ, անկարող էակ է, այնքան կաշկանդւած է, բայց մի և նոյն ժամանակ այնքան քաջ է իւր և իւր ընտանիքի պատիւը, անունը բարձր պահելու համար: